

Թիւ 27508
Հոկտեմբեր 28, 1981

Արժանաչնորհ
Տ. Տիրան Քհնյ. Փափագեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի նկեղեցւոյ
Նախագահ Ֆիսկան Խորհուրդի
Գլխավէնտ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Հոկտեմբեր 8, 1981 թուակիր ձեր նամակը, որով կարգ մը սեղեկութիւններ կը հաղորդէիք ձեր համայնքին տալիք մեր այցելութեան կապակցութեամբ:

Համաձայն ենք ձեր կատարած կարգադրութեանց: Ըստ մեր ժամանակացոյցին՝ Պոսթոնէն Գլխավէնտ պիտի ժամանենք նոյեմբեր 8, երեքշաբթի առաւօտ ժամը 10.15ին, Նոնայթրտ Էրլայնզ`ի թիւ 1021 թռիչքով: Իսկ Գլխավէնտէն դէպի Մինիափոլիս ճամբայ պիտի ելլենք Կիրակի նոյեմբեր 8, երեկոյեան ժամը 6.45ին:

Կիրակի օրուան Ս. Պատարագի ընթացքին կարելի է կատարել նաեւ ուրարի սուչութեան արարողութիւնը, պայմանաւ որ ձեր ներկայացուցած երկու անձերը նախորդ օր, Շաբաթ նոյեմբեր 7, մեզի ներկայանան եւ ըննութիւն մը տան՝ Պատարագի մէջ սարկաւազի բաժիններու ճիշդ երգեցողութեան եւ Գիշերային, Առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութեանց մէջ սարկաւազի բաժիններու անթերի ընթերցման: Կը ներփակենք սարկաւազի ըննութեան ցանկ մը:

Ձեզի եւ Ֆիսկան Խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք հոգիի ու մարմնի առաւել բաշտողջութիւն եւ եկեղեցանուէր ձեր գործերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ